

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 20/06

ք. Վանաձոր

«14» հունվարի 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և „Բալլերինի„ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Հարությունյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

*\* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ դեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 40000000(քառասուն միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԵՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>23</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

<sup>23</sup> Եթե պայմանագրի կնքվել է «Գնու մտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորումը ընդունելու և կատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:  
Եթե պայմանագրի ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է այն մասնագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնինից աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>27</sup>

<sup>27</sup> Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունները և ներքին ծեփերում, ապա կետը շարդրվում է՝ հետևյալ խմբագրումով: «7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե՝  
- պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագրի կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ  
Վանաձորի համայնքապետարան  
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 900232547027  
ՀՎՀՀ 06901936

-----  
Ս.Ասլանյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ  
„Բալլերինի,,ՍՊԸ  
Ք Վանաձոր Տիգրան Մեծի 34/38  
„Էվոկաբանկ,,ՓԲԸ  
ՀՀ 1660013163470100  
ՀՎՀՀ 06957824

-----  
Ա.Հարությունյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

- պայմանագրի կատարման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագրի կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը կապալի օբյեկտի համար հատկացված ֆինանսական միջոցների տաս տոկոսի չափով փոխարինվում է բանկային երաշխիքով: Ընդ որում, Կատարողը համաձայնագրի կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուի ներկայացնում է համաձայնագրի կնքելու ժամանակումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: »:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	79951110	տես նեքևում	դրամ	40000000	1	քաղաքի տարբեր վայրեր	պայմանագրի կնքման պահից մինչև 31.12.2020թ

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան սովյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՕԱՎԱԼԱԹԵՐԹ

ԾՐԱԳԻՐ

«Թանգարանային գիշեր» միջոցառման կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգանբնակչությանը իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ 30-50 վրկ տևողությամբ/:
2. Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանում, Ստեփան Զորյանի տուն-թանգարանում և «Լոռի-Փամբակ» երկրագիտական թանգարանում կազմակերպել ցուցահանդեսները:
3. Ձեռք բերել 300 / 7սմx21սմ չափի, գունավոր թղթով/հրավիրատոմս, կազմակերպել դրանց բաշխումը:
4. Ձեռք բերել նկարչական պարագաների 30 հաաքածու /մատիտ՝տուփով, նկարչական տետր /երեխաներին նվիրելու նպատակով:
5. Նախապատրաստել 3 շնորհավորագիր՝ թանգարանների կոլեկտիվներին հանձնելու համար:
6. Ձեռք բերել 3 ծաղկեփունջ շնորհավորագրերի հետ թանգարանների ղեկավարներին հանձնելու համար:

7. Լրատվամիջոցներով լուսարձանել միջոցառումները:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Թանգարանային գիշեր» միջոցառման կազմակերպման**

1. Հրավիրատուն	300 հատ	-	25.0 հազ. դրամ
2. Շնորհավորագիր	3 հատ	-	3.0 հազ. դրամ
3. Նկարչական պարագաներ (մատիտ 30 տուփ, ավրում 30 հատ)		-	60.0 հազ.դրամ
4. Ծաղկեփունջ	3 հատ	-	12.0 հազ. դրամ
5. Թեմատիկ գովազդային հոլովակ՝		-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 200.0 հազար դրամ

**ԾՐԱԳԻՐ**

**Վանաձորի գեղանկարիչների գեղանկարչական, դեկորատիվ-կիրատական  
արվեստի աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել կազմակերպվող ցուցահանդեսի մասին:
2. Կազմակերպել Վանաձորի գեղանկարիչների ստեղծագործությունների տեղափոխումը կերպարվեստի թանգարան, կատարել ցուցահանդեսի էքսպոզիցիան:
3. Ձեռք բերել 500 /7x21սմ չափի/ գունավոր տպագրության հրավիրատոմս և բաժանել արվեստասերներին:
4. Կերպարվեստի թանգարանում կազմակերպել հյուրասիրություն (ֆուրջետ):
5. Ձեռք բերել ծաղկեփնջեր կին նկարիչների համար:
6. Պատրաստել շնորհակալագրեր ցուցահանդեսի մասնակից նկարիչների համար:
7. Լրատվամիջոցներով լուսարանել ցուցահանդեսը:

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Վանաձորի գեղանկարիչների գեղանկարչական, դեկորատիվ-կիրառական արվեստի  
աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպման

1. Հրավիրատունս 7x21սմ չափի	400 հատ	-	200.0 հազ. դրամ
2. Ծաղկեփնջեր		-	35.0 հազ. դրամ
3. Շնորհակալագրեր		-	20.0 հազ. դրամ
4. Հյուրասիրություն (ֆուրշետ)			
Գինի	3 հատ	-	9.0 հազ. դրամ
Կոնյակ	3 հատ	-	27.0 հազ. դրամ
Շամպայն	3 հատ	-	6.0 հազ. դրամ
Թխվածք	30 կտոր	-	9.0 հազ. դրամ
Շահապետ ԿոնՖերմենտի հասկածածու	3 տուփ	-	15.0 հազ. դրամ
Խնձոր	3 կգ	-	1.5 ռազ. մլլամ
Բանան	3 կգ	-	2.4 հազ. դրամ
Անանաս	2 հատ	-	10.0 հազ. դրամ
Տանձ	2 կգ	-	1.5 հազ. դրամ
Ելակ	2 կգ	-	1.5 հազ. դրամ
Նարինջ	2 կգ	-	1.4 հազ. դրամ
Թուրինջ	2 կգ	-	2.0 հազ. դրամ
Կիվի	2 կգ	-	2.0 հազ. դրամ
Բնական հյութ 1լ.	5 հատ	-	4.5 հազ. դրամ
Հանքային ջուր	6 հատ	-	1.2 հազ. դրամ

Ընդամենը՝

350.0 հազար դրամ

**ԾՐԱԳԻՐ****Պատանի երաժիշտ-կատարողների «Կոմիտաս»****մրցույթ-փառատոնի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանը տեղեկացնել մրցույթի անցկացման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Ձեռք բերել 80 պատվոգիր դաշնամուրային, լարային, փողային, ժող գործիքների, երգեցողության և երգչախմբային բաժինների 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մրցանակի արժանացածներին, ակտիվ մասնակցություն ունեցած դպրոցներին և մասնակիցներին պարգևատրելու համար:
3. Ձեռք բերել Կոմիտասի փայտե և գիպսե դիմաքանդակով մրցանակներ 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մրցանակի արժանացածներին պարգևատրելու համար: Հուշանվերի տեսքը և չափսերը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ: Յուրաքանչյուր կարգի մրցանակից անհրաժեշտ է 12 հատ, ընդհանուր 36 մրցանակ:
4. Կազմել փառատոնի կանոնադրությունը, ժյուրիի կազմը՝ ապահովել ժյուրիի անդամների մասնակցությունը:
5. Մրցանակակիրներին, նրանց դասատուներին և 5 հաղորդավարի պարգևատրելու համար ձեռք բերել ծաղկեփնջեր /50 հոգի/:
6. Մրցույթի օրը հանձնաժողովների անդամների համար պատրաստել սուրճի հյուրասիրություն:
7. Ապահովել հաղորդավարի ներկայությունը առաջին օրվա բացման, և երկրորդ օրվա փակման միջոցառումներին:

8. Հանձնաժողովի անդամներին ապահովել անհատական թղթապանակներով, գրիչներով և նոթատետրերով:
9. Ձեռք բերել փառատոնի լոգոյով 2 պաստառ և դրանց համար նախատեսված պատվանդան (ռոլափ) փառատոնի օրերին մրցույթի վայրի մուտքի մոտ և բեմահարթակի վրա տեղադրելու համար:
10. Բեմի ձևավորման համար ձեռք բերել 4 ծաղկեփունջ:
11. Լրատվամիջոցներով լուսարանել միջոցառումը:

#### ՆԱԽԱՀԱՇԻՎ

#### Պատանի երաժիշտ-կատարողների «Կոմիտաս»

#### մրցույթ-փառատոնի կազմակերպման

1. Մրցանակ	36 հատ -	150.0 հազ. դրամ
2. Պատվոգիր	80 հատ -	80.0 հազ. դրամ
3. Ծաղկեփունջ	50 հատ -	200.0 հազ. դրամ
4. Մրցույթի լոգոյով պաստառ 1մ. x 2մ. չափսի	2 հատ -	14.0 հազ. դրամ
5. Լոգոյով պաստառի պատվանդան (ռոլափ)	2 հատ -	40.0 հազ. դրամ
6. Հաղորդավար	1 անձ -	30.0 հազ. դրամ
7. Հյուրասիրություն հանձնաժողովի անդամների համար	-	65.0 հազ. դրամ
8. Թղթապանակ, գրիչ և նոթատետր	-	101.0 հազ. դրամ
9. Ծաղկեփունջ բեմի ձևավորման համար	4 հատ -	20.0 հազ. դրամ
10. Դիզայներ, պաստառի և տպագրության համար	20 մ <sup>2</sup> -	50.0 հազ. դրամ
11. Թեմատիկ գովազդային հոլովակ	-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ **850.0 հազ. դրամ**

## ԾՐԱԳԻՐ

### «Երգի տոն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին/թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50վրկ. տևողությամբ/:
2. Միջոցառումն անցկացնելու համար ապահովել ղեկորացիաների, ռադիոսարքավորումների տեղափոխումն ու տեղադրումը: Վարձել 2 բանվոր, ապահովել օպերատորի և հաղորդավարի ներկայությունը: Վանձակալել շարժական բեմահարթակ:
3. Կազմել երկժամ համերգային ծրագիր քաղաքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, միջոցառման ծրագիրն ու վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
4. Բեմահարթակն ու հարակից տարածքները ձևավորելու նպատակով ձեռք բերել լայնաֆորմատ տպագրության պաստառներ/30սք/՝ տոնի համար նախապես ընտրված երգերի տեքստերով, դրանք փակցնել միջոցառման վայրում:
5. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Երզնի տուն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման

1. Լայնաֆորմատ տպագրություն	30մ <sup>2</sup>	-	101.0 հազ. դրամ
2. Օպերատորների վարձավճար		-	20.0 հազ.դրամ
3. Հաղորդավարների վարձավճար		-	60.0 հազ. դրամ
4. Բանվորի վարձավճար	2 մարդ	-	40.0 հազ. դրամ
5. Գույքի տեղափոխման աշխատանքներ	3 երթ	-	9.0 հազ. դրամ
6. Չայնային տեխնիկայի վարձակալություն	20 ԿՎ հզ	-	60.0 հազ. դրամ
7. Շարժական բեմահարթակ 8x6մ. , 1մ. բարձրությամբ		-	500.0 հազ. դրամ
8. Սցենար		-	50.0 հազ դրամ
9. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
10. Տրանսպորտ		-	100.0 հազ. դրամ
	Ընդամենը՝		1040.0 հազար դրամ

## ԾՐԱԳԻՐ

### «Գրադարանավարի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել կազմակերպվող համաքաղաքային միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Կազմակերպել գրադարանավարներին պարզևատրելու միջոցառում, վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
3. Պարզևատրման արարողությունից հետո կազմակերպել հյուրասիրություն (ֆուրշետ):
4. Նախապատրաստել 20 պատվոգիր և 20 ծաղկեփունջ լավագույն գրադարանավարներին պարզևատրելու համար:
5. Պատրաստել 2 շնորհակալագիր համայնքային և մարզային գրադարանների կոլեկտիվներին հանձնելու համար, շնորհավորագրերի տեքստը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
6. Ձեռք բերել սննդամթերք՝ հյուրասիրություն կազմակերպելու համար:
7. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումները:

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

### «Գրադարանավարի օրվան» նվիրված միջոցառումների կազմակերպման

1. Պատվոգիր	20 հատ	-	20.0 հազ դրամ
2. Հյուրասիրություն		-	88.0 հազ. դրամ
3. Ծաղկեփունջ	20 հատ	-	90.0 հազ. դրամ
4. Շնորհավորագիր	2 հատ	-	2.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 200.0 հազար դրամ

## ԾՐԱԳԻՐ

### «Վանաձորի օր» համաքաղաքային տոնակատարության կազմակերպման

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Ձեռք բերել 400 14սմ x 13սմ, կամ 21սմ x 21սմ գունավոր տպագրության՝ տոնը խորհրդանշող հրավիրատոմս և 400 ծրար՝ հանրապետության մի շարք համայնքների ղեկավարներին, գերատեսչություններին, ուսումնական հաստատություններին, հասարակական կազմակերպություններին, պատվավոր քաղաքացիներին, հանրապետության այլ համայնքներում ապրող նշանավոր վանաձորցիներին և այլ պաշտոնյաներին հրավիրելու համար, ցանկը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի հետ: Կազմակերպել առաքումը:
3. Քաղաքը տոնական տեսքի բերելու նպատակով ձեռք բերել քաղաքի տոնի խորհրդանշանով ձևավորված 100 սպիտակ կտորից և 100 ՀՀ պետական /1մ չափի/ դրոշ:
4. 2 հատ քաղաքի տոնի կարգախոսով գրությամբ /8 մ x 0.6 մ/ լայնաֆորմատ տպագրության պաստառ կախել քաղաքի մուտքերի մոտ՝ Երևանյան խճուղու և Շիրակի պողոտայի սկզբնամասերում: Պատրաստել ղեկորացիաներ քաղաքի գլխավոր պողոտայում և Հայքի հրապարակում տեղադրելու համար: Տոնական ձևավորման աշխատանքները կատարելու համար վարձակալել 5 օրով 1ավտոաշտարակ ( 15-17մ սանդուղքով):
5. Անցկացնել միջոցառումների շարք քաղաքի տարբեր հատվածներում, միջոցառման վայրերը և գեղարվեստական ծրագրերը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի հետ:
6. Տոնի անցկացման համար ընտրել օրվա կարգախոս, պատրաստել կարգախոսը ներառող նշան, որը պետք է լինի տոնի հետ կապված բոլոր տպագրական նյութերում և պաստառներում, բացառությամբ հրավիրատոմսի:

7. Վարձակալել մեկ միկրոբեռնատար ավտոմեքենա՝ քաղաքի տարբեր հասվածներում ժամը 11-ից կազմակերպվող ցուցահանդեսների, դեկորացիաների, ստենդների, մոլբերտոների, ռադիոսարքավորումների և այլ անհրաժեշտ պարագաների տեղափոխումը կազմակերպելու և միջոցառումից հետո հետ տանելու համար:
8. Կազմակերպել քաղաքի գեղանկարիչների, անհատ ստեղծագործողների ստեղծագործությունների, դեկորատիվ - կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդեսներ:
9. Նախապես հաստատված ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների վայրերում ապահովել ձայնային տեխնիկայով (դինամիկ, միկրոֆոն և երաժշտական կատարումների համար նախատեսված այլ միջոցներ):
10. Նախատեսված բոլոր միջոցառումների անցկացման համար ապահովել հաղորդավարի և օպերատորների ներկայությունը: Միջոցառումներից մեկում ապահովել Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախմբի մասնակցությունը, որի համար վարձակալել մեկ ավտոբուս՝ նվագախմբին հրապարակ բերելու և հետ տանելու համար:
11. Միջոցառումների շարքը սկսել հանդիսավոր մասով, որտեղ կլինեն շնորհավորանքի ուղերձներ, այնուհետև ըստ նախատեսված վայրերի անցկացնել թեմատիկ այլ միջոցառումներ: Երեկոյան ժամը 18-22-ը համերգի համար կազմել տոնական ծրագիր հրավիրված էստրադային արտիստների, Վանաձորի գեղարվեստական համույթների և անհատ կատարողների մասնակցությամբ: Երեկոյան համերգի համար վարձակալել լուսաձայնային տեխնիկա և շարժական բեմահարթակ:
12. Վանաձոր ժամանած հյուրերի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ձեռք բերել սննդամթերք (հյուրասիրության համար):
13. Կազմակերպել դրոշների և կարգախոսների ապամոնտաժումը, հաշվառումը և պահեստավորումը: Տոնական ձևավորման հավաքման աշխատանքները կատարելու համար վարձակալել 2 օրով 1 ավտոաշտարակ:
14. «Վանաձորի օր» տոնախմբության շրջանակներում անհրաժեշտ աշխատանքներ կատարելու համար հրավիրել օրավարձով աշխատող բանվորներ :
15. Նախապես պատվիրել և ձեռք բերել / 3 արկղ- 1 դյույմ, 4արկղ- 2.5դյույմ, 4 արկղ - 2 դյույմ / հրավառության ձողիկներ՝ Հայքի հրապարակում երեկոյան համերգից հետո՝ ժամը 22-ին նախատեսված տոնական հրավառության համար:
16. Վանաձոր ժամանած հատուկ հյուրերի համար կազմակերպել հյուրասիրություն և ապահովել հյուրերի գիշերակացը հյուրանոցում:
17. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

#### ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Վանաձորի օր» համաքաղաքային տոնակատարության կազմակերպման

1. Հրավեր /քաղաքի տոնի /	400 հատ	-	320.0 հազ. դրամ
2. Ծրար	400 հատ	-	20.0 հազ. դրամ
3. Դրոշ /սպիտակ 1 x 0.5 չափի /	100 հատ	-	260.0 հազ. դրամ
4. ՀՀ պետ. դրոշ / 1մ չափի /	100 հատ	-	260.0 հազ. դրամ
5. Ծածկով շարժական բեմահարթակի /10x11մ. չափի և 1,5մ. բարձրությամբ/ և			

ձայնային տեխնիկայի /40 ԿՎ հզ./ և 40 հատ բեմի լույսերի վարձակալություն	-	2.000.0 հազ. դրամ
6. Հրավառություն 1 դյույմ	3 արկղ	200.0 հազ. դրամ
7. Հրավառություն 2.5 դյույմ	3 արկղ	390.0 հազ. դրամ
8. Հրավառություն 2 դյույմ	3 արկղ	300.0 հազ. դրամ
9. Հրավառություն 2 դյույմ	1 արկղ	90.0 հազ. դրամ
10. Հրավառություն 4 դյույմ	1 արկղ	150.0 հազ. դրամ
11. Ավտոբուսի վարձակալություն (փող. նվազախմբին միջոցառման վայր բերելու և հետ տանելու համար և շաբթի հրապարակում գլխավոր համերգի մասնակիցներին որպես հանդերձարան օգտագործելու համար)	3 ավտ.	40.0 հազ. դրամ
12. Բանվորների վարձավճար	6 մարդ	300.0 հազ. դրամ
13. Հաղորդավարի վարձավճար	2 մարդ	200.0 հազ. դրամ
14. Ձայնային օպերատորի վարձավճար	-	30.0 հազ. դրամ
15. Լուսային օպերատորի վարձավճար	-	30.0 հազ. դրամ
16. Ավտոաշտարակի վարձավճար 7 օր	1 մեք.	150.0 հազ. դրամ
17. Միկրոբեռնատարի վարձակալություն	15 երթ	50.0 հազ. դրամ
18. Հյուրասիրություն քաղաքապետարանում	-	157.0 հազ. դրամ
19. Հատուկ հյուրերի համար հյուրասիրության կազմակերպում	-	800.0 հազ. դրամ
20. Գիշերակաց հյուրանոցում	-	1500.0 հազ. դրամ
21. Երգիչների վարձավճար	-	1000.0 հազ. դրամ
22. Աուդիոտեխնիկայի վարձակալություն /10 ԿՎ / այլ վայրերում միջոցառումների համար/	-	300.0 հազ. դրամ
23. Տեխնիկական օպերատոր	5 անձ	100.0 հազ. դրամ
24. Լայնաֆորմատ տպագրություն	200 մ <sup>2</sup>	500.0 հազ. դրամ
25. Դեկորների պատրաստում	-	400.0 հազ. դրամ
26. Թեմատիկ գովազդային հոլովակ	-	300.0 հազ. դրամ

**ԸՆդամենը՝**

**9.847.0 հազար դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**Կամերային երգչախմբի և Կամերային նվագախմբի համերգների կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող համերգների մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Կամերային նվագախմբի համերգը կազմակերպել ՀՈԱԿ-ներից մեկի դահլիճում, վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ: Այդ նպատակով ձեռք բերել և բաշխել 300 / 7x21սմ չափի, գունավոր թղթով/ հրավիրատու:

3. Կամերային երգչախմբի համերգը կազմակերպել էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, որի համար ձեռք բերել և բաշխել 300 /7x21սմ չափի, գունավոր թղթով/ հրավիրատոմս:
4. Բեմերի ձևավորման համար ձեռք բերել 6 ծաղկեզամբյուղ, յուրաքանչյուր համերգին 3 հատ: Ծաղկեփնջերը համերգների վերջում նվիրել խմբերի ղեկավարներին և հաղորդավարուհիներին:
5. Ձեռք բերել 2 շնորհակալագիր կոլեկտիվներին հանձնելու համար:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել համերգները:

#### ՆԱԽԱՀԱՇԻՎ

#### «Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված

Կամերային երգչախմբի և Կամերային նվագախմբի համերգների կազմակերպման

1. Հրավիրատոմս կամ. երգչախմբի 7x21 սմ	300 հատ -	90.0 հազ. դրամ
2. Հրավիրատոմս կամ. նվագախմբի 7x21 սմ	300 հատ -	90.0 հազ. դրամ
3. Շնորհակալագիր	2 հատ -	2.0 հազ. դրամ
4. Ծաղկե զամբյուղ բեմի համար	6 հատ -	22.0 հազ. դրամ
5. Դիզայներ	-	50.0 հազ. դրամ
6. Թեմատիկ գովազդային հոլովակ	-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 354.0 հազար դրամ

#### ԾՐԱԳԻՐ

#### «Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված

- Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի համերգի կազմակերպման
1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող համերգի մասին /թեմատիկ գովազդային հոլովակ 30-50 վրկ. տևողությամբ/:
  2. Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի համերգը կազմակերպել Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում: Այդ նպատակով ձեռք բերել և բաշխել 500 /7x21 չափի, գունավոր թղթով/ հրավիրատոմս:
  3. Բեմի ձևավորումը նախապես համաձայնեցնել Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի գեղ. ղեկավարի և Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
  4. Ապահովել երկու հաղորդավարի ներկայությունը:

5. Բեմի ձևավորման համար ձեռք բերել 5 ծաղկեզամբյուղ, որոնք համերգի ավարտից հետո նվիրել, հաղորդավարուհուն, մեներգչուհիներին և երաժշտական մասի ղեկավարին:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել համերգը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**«Հորովել» երգի-պարի համույթի համերգի կազմակերպման**

1. Հրավիրատոմս	500 հատ	-	150.0 հազ. դրամ
2. Ծաղկեզամբյուղ	5 հատ	-	40.0 հազ. դրամ
3. Լուսաձայնային տեխնիկա		-	100.0 հազ. դրամ
4. Հանդիսավար	2 անձ	-	60.0 հազ. դրամ
5. Բեմի ձևավորում		-	50.0 հազ. դրամ
6. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 500.0 հազար դրամ

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**«Գրական օր» գրական-երաժշտական ցերեկույթի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին/թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Միջոցառումը կազմակերպել Ստեփան Զորյանի տուն-թանգարանում:
3. Ձեռք բերել և բաշխել 150 /7x21սմ չափի, գունավոր թղթով / հրավիրատոմս:
4. Ստ. Զորյանի տուն-թանգարանում հյուրասիրություն (ֆուրջետ) կազմակերպելու համար ձեռք բերել համապատասխան սննդամթերք:
5. Ձեռք բերել 40 փաթեթավորված հոլանդական վարդ և 20 գիրք՝ քաղաքի կին գրողներին նվիրելու և 1 շնորհակալագիր՝ կոլեկտիվին հանձնելու համար:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը.:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**«Գրական օր» գրական-երաժշտական ցերեկույթի կազմակերպման**

1. Հրավիրատոմս	150 հատ	-	45.0 հազ. դրամ
2. Շնորհակալագիր	1 հատ	-	1.0 հազ. դրամ

3. Վարդ (շղանդական փաթեթավորված)	40 հատ	-	40.0 հազ. դրամ
4. Հյուրասիրություն (ֆուրջետ)			
Գինի	2 հատ	-	4.4 հազ. դրամ
Կոնյակ	2 հատ	-	11.4 հազ. դրամ
Թխվածք	25 կտոր	-	5.0 հազ. դրամ
Խնձոր	2 կգ	-	0.8 հազ. դրամ
Բանան	2 կգ	-	1.7 հազ. դրամ
Բնական հյութ 1լ.	4 հատ	-	2.8 հազ. դրամ
Շոկոլադե կոնֆետների հավաքածու	2 տուփ	-	5.8 հազ. դրամ
Հանքային ջուր 0.5լ.	6 հատ	-	0.96 հազ. դրամ
Նարինջ	2 կգ	-	1.4 հազ. դրամ
Անձեռոցիկ	2 տուփ	-	0.74 հազ. դրամ
5. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
6. Գրքերի ձեռքբերում	20 հատ	-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 321.0 հազ. դրամ

#### ԾՐԱԳԻՐ

#### «Ծաղկի տուն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Միջոցառման վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
3. Միջոցառումն անցկացնելու համար ապահովել դեկորացիաների, գեղարվեստի դպրոցից մուլբերտների, ռադիոսարքավորումների տեղափոխումն ու տեղադրումը: Վարձել 2 բանվոր, ապահովել օպերատորի և հաղորդավարի ներկայությունը: Վարձակալել երաժական բեմահարթակ միջոցառման համար /8x6 մ. չափսի և 1մ. բարձրությամբ/:
4. Կազմել երկու ժամանոց համերգային ծրագիր քաղաքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ:
5. Բեմահարթակն ու հարակից տարածքները ձևավորելու նպատակով ձեռք բերել 600 գունավոր փուչիկ:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Ծաղկի տուն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման**

11. Փուչիկ /տեղանքը զարդարելու համար/	600 հատ	-	60.0 հազ. դրամ
12. Օպերատորների վարձավճար		-	30.0 հազ.դրամ
13. Հաղորդավարի վարձավճար		-	20.0 հազ. դրամ
14. Բանվորի վարձավճար	2 մարդ	-	60.0 հազ. դրամ
15. Գույքի տեղափոխման աշխատանքներ	3 երթ	-	15.0 հազ. դրամ
16. Ձայնային տեխնիկայի վարձակալություն	15 ԿՎ հզ.	-	65.0 հազ. դրամ
17. Շարժական բեմահարթակի վարձակալություն 8x6մ. չափի, 1մ. բարձր.		-	500.0 հազ. դրամ
	<b>Ընդամենը՝</b>		<b>750.0 հազար դրամ</b>

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**«Թատերական օր» ներկայացումների կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. ստեղծությամբ /:
2. Ձեռք բերել Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական և Վանաձորի համայնքապետարանի «Բոհեմ» և տիկնիկային թատրոնների տոմսեր և բաժանել համայնքապետարանի աշխատակիցներին և քաղաքացիներին:
3. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**«Թատերական օր» ներկայացումների կազմակերպման**

1. Տիկնիկային թատրոնի տոմսեր	-	150.0 հազ. դրամ
2. «Բոհեմ» կամերային թատրոնի տոմսեր	-	150.0 հազ. դրամ
3. Հ Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տոմսեր	-	200.0 հազ. դրամ
4. Թեմատիկ գովազդային հոլովակ	-	100.0 հազ. դրամ
	<b>Ընդամենը՝</b>	<b>600.0 հազ. դրամ</b>

**ԾՐԱԳԻՐ**

**Հրավերով Վանաձոր ժամանած պատվիրակությունների պատվին մշակութային միջոցառումների կազմակերպման**

1. Նախապատրաստել պատվոգրեր, թղթապանակներ և հուշանվերներ պատվիրակությունների անդամներին պարզևատրելու համար:
2. Կազմակերպել հյուրասիրություն Վանաձոր ժամանած պատվիրակությունների համար:
3. Ապահովել հյուրանոցով:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**Հրավերով Վանաձոր ժամանած պատվիրակությունների պատվին մշակութային միջոցառումների կազմակերպման**

1. Պատվոգրեր	10 հատ	-	10.0 հազ դրամ
2. Թղթապանակներ	10 հատ	-	30.0 հազ դրամ
3. Հուշանվերներ	10 հատ	-	60.0 հազ դրամ
4. Հյուրասիրություն		-	200.0 հազ.դրամ
5. Հյուրանոց	4 անձ	-	100.0 հազ.դրամ
	<b>Ընդամենը՝</b>		<b>400.0 հազար դրամ</b>

**ԾՐԱԳԻՐ**

**Անվանի մարդկանց, հորեյանական տոների, մեծարման երեկոների, շնորհանդեսների կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել միջոցառման անցկացման մասին:
2. Կազմել մեկուկեսժամյա համերգային ծրագիր միջոցառումների կազմակերպման համար, վայրը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
3. Նախապատրաստել, պատվոգրեր, թղթապանակներ և հուշանվերներ արվեստագետներին, գրողներին պարզևատրելու համար:
4. Կազմակերպել հյուրասիրություն Վանաձոր ժամանած հյուրերի համար:
5. Ձեռք բերել և առաքել 350 հրավիրատոմս:
6. Միջոցառումն ապահովել ձանային տեխնիկայով:
7. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումները:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**Անվանի մարդկանց, հորեյանական տոների, մեծարման երեկոների,**

շնորհանդեսների կազմակերպման

1. Պատվոգիր	20 հատ	-	10.0 հազ դրամ
2. Թղթապանակ	20 հատ	-	20.0 հազ դրամ
3. Հուշանվեր	20 հատ	-	100.0 հազ դրամ
4. Հյուրասիրություն		-	170.0 հազ.դրամ
5. Հրավիրատոմս	350 հատ	-	135.0 հազ.դրամ
6. Դիզայներ		-	50.0 հազ.դրամ
7. Հաղորդավար		-	30.0 հազ.դրամ
8. Տեխնիկայի վարձակալություն	15 ԿՎ	-	75.0 հազ.դրամ

Ընդամենը՝

590.0 հազ. դրամ

ԾՐԱԳԻՐ

«Օդեսա-Վանաձոր մյուզիք օլիմպ» միջազգային երաժշտական փառատոնի

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով քաղաքի բնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառումների մասին/թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Կազմակերպել փառատոնի ժյուրիի արտասահմանից ժամանող ժյուրիի անդամների ընդունելությունը օդանավակայան և տեղափոխումը Վանաձոր:
3. Ապահովել հյուրերին կեցության պայմաններով Վանաձոր քաղաքի տարածքում գտնվող հյուրանոցներից մեկում:
4. Կազմակերպել արտերկրյա հյուրերի մեկօրյա էքսկուրսիա հանրապետության տեսարժան վայրեր
5. Էքսկուրսիայի ընթացքում կազմակերպել հյուրասիրություն:
6. Փառատոնի օրը կազմակերպել սուրճի ընդմիջում ժյուրիի անդամների և կազմակերպիչների համար:
7. Ձեռք բերել հուշանվերներ արտասահմանյան հյուրերի համար:
8. Պատրաստել շնորհակալագրեր և ծաղկեփնջեր հյուրերի և փառատոնի կազմակերպմանը աջակցած անձանց համար:

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Օդեսա-Վանաձոր մյուզիք օլիմպ» միջազգային երաժշտական փառատոնի

1. Ծաղկեփունջ	15 հատ	- 60.0 հազ. դրամ
2. Հուշանվեր	10 հատ	- 200.0 հազ. դրամ
3. Պատվոգիր	15 հատ	- 20.0 հազ. դրամ
4. Հյուրասիրություն	2 անգամ 15 մարդու համար	- 300. հազ. դրամ
5. Հյուրերին օղանավակայանից Վանաձոր և հակառակ ուղղությամբ տեղափոխելու մեքենա		- 60.0 հազ. դրամ
6. Հյուրանոցային համարների վճար		- 1200.0 հազ. դրամ
7. Այցելություն տեսարժան վայրեր /2 երթ միկրոավտոբուս/		- 120.0 հազ. դրամ
8. Սուրճի ընդմիջում		- 40.0 հազ. դրամ
9. Թեմատիկ գովազդային հոլովակ		- 100.0 հազ. դրամ
10. Թարգմանիչ		- 100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 2200.0 հազ. դրամ

### ԾՐԱԳԻՐ

#### Վանաձոր-Գյումրի մշակութային օրերի կազմակերպման

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով քաղաքի բնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառումների մասին:
2. Ձեռք բերել պայմանանավորվածություն Գյումրիի քաղաքապետարանի մշակույթի բաժնի հետ միջոցառումների անցկացման համար:
3. Ձեռք բերել 500 հրավիրատուներ Գյումրիի հանդիսատեսին բաժանելու համար:
4. Ձեռք բերել միջոցառումների անցկացման 80 ազդագրեր Գյումրիում տեսանելի վայրերում փակցնելու համար:
5. Կազմակերպել մշակութային օրերի մասնակից Վանաձորի կոլեկտիվների, անհատ կատարողների Վանաձոր-Գյումրի-Վանաձոր տեղափոխումը:
6. Կազմակերպել մեկ համերգային ծրագիր:
7. Գյումրի մեկնողների համար ձեռք բերել սննդամթերք :
8. Ձեռք բերել ծաղկեզամբյուղներ և հուշանվերներ Գյումրիի քաղաքապետարանի մշակույթի բաժնի և մշակույթի գործիչների համար:
9. Ապահովել հաղորդավարի ներկայությունը:

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

### Վանաձոր-Գյումրի մշակութային օրերի կազմակերպման

1. Հրավիրատուն	500 հատ	-	45.0 հազ.դրամ
2. Ազդագրեր	80 հատ	-	36.0 հազ դրամ
